ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 42

«26» 04 2018 թ. գ. Երևան

ԴԱՏԱԽԱԶԻՆ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածի 2-րդ մասին պահանջի կատարումն ապահովելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով՝

Հրամայում եմ՝

1. Սահմանել դատախազին միանվագ դրամական օգնություն տալու կարգը՝ համաձայն հավելվածի (կցվում է):

2. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը վերցնում եմ ինձ վրա:

3. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին և Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության
գլխավոր դատախազի
2018 թվականի ապրիլի 26 -ի
թիվ «42» հրամանի

ԿԱՐԳ

ԴԱՏԱԽԱԶԻՆ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ

1. Սույն կարգով սահմանվում է դատախազին միանվագ դրամական օգնություն (այսուհետ՝ օգնություն) տալու կարգը և դրա հետ կապված հարաբերությունները:

2. Օգնություն տալու գործընթացը կարգավորվում է «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին **(այսուհետ՝ օրենք)**, սույն կարգին և այլ իրավական ակտերին համապատասխան:

3. Դատախազին օգնություն կարող է տրվել գլխավոր դատախազի կողմից՝ իր նախաձեռնությամբ, ոլորտը համակարգող տեղակալի, դատախազի անմիջական ղեկավարի միջնորդության (առաջարկի) կամ դատախազի դիմումի հիման վրա:

4. Օգնություն ստանալու նպատակով դատախազը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին (այսուհետ՝ գլխավոր դատախազ) ներկայացնում է օգնություն տալու մասին գրավոր պատճառաբանված դիմում՝ համաձայն ձևի (կցվում է):

5. Դատախազին օգնություն կարող է տրվել դատախազի ընտանիքի անդամի մահվան, դատախազի ամուսնության, տարերային աղետի հետևանքով դատախազին վնաս պատճառելու, դատախազի երեխայի ծննդի, դատախազի կամ նրա ընտանիքի անդամի երկարատև հիվանդության և այլ դեպքերում:

6. Սույն կարգի 4-րդ կետով նախատեսված դիմում ներկայացնելու դեպքում, դատախազին օգնություն տալու նպատակահարմարության հարցը (դիմումը բավարարել կամ մերժել) որոշում է գլխավոր դատախազը՝ օգնություն տալու մասին դիմումը ստանալուց հետո 3 օրվա ընթացքում:

7. Օգնություն տալու մասին դիմումը գլխավոր դատախազի կողմից համապատասխան հանձնարարությամբ տրամադրվում է Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին՝ բավարարելու դեպքում՝ համապատասխան հրամանի նախագիծը

պատրաստելու և սահմանված կարգով ընթացք տալու, իսկ մերժելու դեպքում՝ այդ մասին դատախազին տեղեկացնելու համար:

8. Օգնություն տալու մասին դիմումի, կամ դատախազի անմիջական ղեկավարի համապատասխան զեկուցագրի հիման վրա դատախազին օգնություն տալը կարող է մերժվել՝

1) օգնություն տալու անհնարինության դեպքում (պետական բյուջեով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատավարձի ֆոնդի հնարավորությունների անբավարարության դեպքում),

2) տվյալ տարվա ընթացքում 2 և ավելի անգամ դրամական օգնություն տալու դեպքում:

9. Օգնություն տալու մասին դիմումների հաշվառումն ապահովում է Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարը:

10. Դրամական օգնությունը տրամադրվում է բանկային փոխանցումով՝ հրամանը ստորագրվելուց հետո 3-օրյա ժամկետում:

11. Դատախազին օգնությունը տրամադրվում է տվյալ տարվա պետական բյուջեով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատավարձի ֆոնդի սահմաններում:

12. Տրամադրվելիք օգնության չափը յուրաքանչյուր դեպքում որոշում է գլխավոր դատախազը:

Ձև

Հայաստանի Հանրապետության

գլխավոր դատախազին

Դիմողի պաշտոնը, անունը, ազգանունը _____

Դ Ի Մ ՈՒ Մ

Միանվագ դրամական օգնություն տալու մասին

Ես՝ _____,
(պաշտոնը, անունը, ազգանունը)

_____ նպատակով խնդրում եմ տալ դրամական օգնություն:

ԴԻՄՈՂ _____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

____ _____ 201 թ.